

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈՒՆԱՐԵՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ՕՔԻԴԱՅԻ ՎԱՐՔԸ)*

Թարգմանություն հունարենից՝ Հրաչ Բարթկլյանի
Առաջարան՝ Արամ Տեր-Ղևոնյանի

Գալանեի աղոթքը

87. Երբ թիկնապահները դրա նախապատրաստությունն էին տեսառում, երանելի Գայանեն երեք կույսերով հանդերձ սկսեց աղոթքը ու ասել. «Գոհանամ զքն», Տեր Աստված, որ արժանացրիր մեզ մոռնել հանուն Քո մեծ անվան և հանդրդակից լինել Քո սրբերի մահվան: Մենք շտապում ենք, ցանկանալով հանդիպել Քեզ սիրողներին: Ես շատ եմ ուրախ իմ դասեր՝ Հոփիսիմեի համար, որին մինչևն վերջ պիտի հետևեմ և իմ մյուս քույրերին, որոնք Քո սուրբ անվան սիրովն նախատակվեցին: Արդ, միշտ մեզ Տեր, քանզի «վասն Քո մեռանիմք զօրթանապահամարեցաք իրու զոխար ի պահանուն»¹⁰: Արդ, Տեր Աստված, և մի՛ մերժիր, այլ փրկի՛ր մեզ Քո անվան սիրովն¹¹ և տուր մեզ Քո կատարյալ հաղթանակը, որպեսզի խայտառակվեն անօրենները իրենց արարթներում»:

ԳԱՅԱՆԵԻ ԵՎ ՄՅՈՒՄ ԵՐԵՔ ԿՈՒԹՍԵՐԻ
ԽԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ

88. Նրանք վերջացրին աղոթքը, իսկ թիկնապահները, առնելով և մերկացնելով նրանց, յորաքանչյուրին պրեկեցին չորս ցցերից, պճումնեցին ծակեցին, խորվակ մոտցին և փշերվ, կենուանի վիճակում ներքից մինչևն կուրծքը մորթագերծ արեցին, ապա ծոծրակը ծակելով լեզուն [ետևից] դորս քաշեցին ու կտրեցին, ի վերա ամենայնի անվճառ մնացած

* Ծարունակված «Էջմիածին» ամսագրի 1973 թվականի № 4-ից:

¹⁰ Հմմտ. Ես., ԾԳ, 7:

¹¹ Հմմտ. Յաղմ. ԽԳ, 28:

մարմնի մասերը, այսինքն փորս ու կործը սոր քարերով հարվածեցին և երբ դեռ շնչում էին, գիշատեցին: Սուրբ Հոփիսիմեն և իր երևումներեք ընկերութիւնները համատակվեցին և սկստեմքրեք ամսի քանակեցին, իսկ երանելի Գայանեն երեք կույսերով նոյն սեպտեմբեր ամսի քանայութին:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆԸ

Տրդատի պատժվելը

89. Սուրբ կույսերի նախատակությունից հետո Տրդատ թագավորը վեց օր սուգ պահեց, միշտելով երանելի Հոփիսիմեի գեղեցկությունը: Վեց օր հետո, տեղի տալով իր իշխանների խնդրանքին, նա բրամակեց հավաքել իր զորքը՝ որպի գնալու համար: Երբ դա կատարվեց, ծիւը լծվեցին և նա կառք բարձրացավ, հանկարծ նրա վրա Աստծո պատուհանը եկավ, չար ոգին հարվածներ նրան և կառքից տապակեց: Նա սկսեց մոլեգնել, իր մարմնն ուժել և Բարեկոնի թագավոր Նարուգողոնոսուրի մաման վայրի գաղամի փոխակերպվեց: Նա վայրի խոզի վերածվեց և սկսեց վարազների հետ մարգագետիններում արածել: Նրա աստրադրյալները, թեն ուզեցին նրան բռնել, բայց չկարողացան քանզի [Տրդատը] բանական ուժով էր օժոված, բայց այդ, դների ազդմամբ նրա վրա վայելնությունն էր էր ավելացել: Ոչ միայն նա, այլ և բոլոր քաղաքացիները, նրա համայն զորքը, յորաքանչյուրը նրա հման սեփական մարմինն էր ուսում: Թագավորի ամրող ընտանիքը նոյն փորձության հանդիպեց:

Խոսրովիդուխտի տեսիլը

90. Այդ միջոցին թագավորի քույրը, ամունը Խոսրովիդուխտ, Տիրոջ կողմից տեսիլը տեսավ, որը

պատմեց թագավորի մարդկանց, մեծամեծներին ու նախարարներին¹². «Այս զիշեր տեսիրում ես մի բուսակերպ մարդ տեսա, որ իմ մոտ քարով առաց. «Եուր երրեք չեր ազանվի այս փորձանքից, բայի մարդ չեր ուղարկել Արտաշատ քաղաքը և չեր քերել սուրբ Գրիգորիոսին, որին դուք կապահեների մեջ առնենով, խորագուն վիրապն եք գտել: Նա ձեզ ցոյց կոս բուժիչ նեղը»: Լսելով նրան, ալիսցին ծիծանել նրա վրա ու ասել. «Երկի դու էլ եռուն մուլօքությամբ ես նախշակիլ և աաածդ զգիտուա: Եթե դու առողջ լինեիր, կիմանալիր, որ տառնինագ տարի է, որ նա գտնվում է օճերով, քարքերով, դեմքերով ու կարինեներով իմ խորագուն վիրապում, թունավոր գալանեները նրա ուլորներն անձամ թողած չեն լինի»: Դրանից մետք տեսիրը կրկնվեց կնոջ, բայց նրանք դարձաւ չնախատացին, մինչև հինգերորդ անգամ նույնը [տուսիրում] պարզվեց, նրան սպանալով, որ եթե այդ բանը չնայանեն թագավորի մարդկանց, նախարարներին ու թագավորի բոլոր իշխաններին, ապա ավելի սպասափելի փորձությաների կիսանշակն և ինը [Խոսրովի իշությանը], և թագավորը, և բոլոր նրանք, որոնք բնակվում են այդ երկրու: Վերոհիշալ Խոսրովի իշությանը անշափ սպասափառար դարձաւ դիմուց թագավորի մարդկանց, նախարարներին ու իշխաններին, նայունց նրանց ամեն ինչ, պատմեց նաև իրենց դեմ եղած սպասափառի մարդկանց:

Գրիգորիոսի ազատումը

91. Լսելով նրա պատմածը և իմանալով, որ եթե նրանելի Գրիգորիոսին վիրապից չնամեն ավելի սպասափելի փորձությաների են նանշակելու, փորձանակի նախարարներից մեկին, անունը Օտայ, Արտաշատ քաղաքն ուղարկեցին սրբին խորագուն վիրապից հանելու նամար: Օտայը, հասնելով միշտական Արտաշատ քաղաքը, նրան ընդառաջ եւաս քաղաքան պատճառն իմանալու: Օտայն ասաց նրանց. «Կապայ Գրիգորիոսի նամար եմ եկել ապատեղ»: Լսելով դա, նրանք ապշեցին: «Ո՞վ կիմավատա, որ նա դու կննդանի է: Բազում տարիներ են անցել [այն օրից], երբ նա վիրապ նետվեց և մենք գիտենք, որ մարդ ստուների սուլոցին անգամ չի կարող դիմանալ: Ինչպես ես դու ասում, թե կապայ Գրիգորիոսի նամար ես եկել»: Օտայն ամեն ինչ բացատրեց նրանց, թե ինչպես թագավորի քոյք Խոսրովի իշությանը տեսիր է տեսէ: Նրանք սպասափառար եղած, երկար պարանելու իրար կապելով, հասան երանելի Գրիգորիոսի եղած վիրապը: Նրանք պարան իշեցին, իսկ նախարար Օտայը ամեն ինչ բացատրեց նրանց, թե ինչպես թագավորի քոյք Խոսրովի իշությանը տեսիր է տեսէ: Նրանք սպասափառար եղած, երկար պարանելու իրար կապելով, ուզում էին նրանց հանդերձավլորել, բայց երանելի Գրիգորիոսը, թագավորի [մարդկանց] և թագավորի նախարարների քերած հանդերձները նամարեց ոչ արժանի, թույլ չտվեց, և սրբերին կից եղած նրանց հանդերձների ծվենեները ժամանակակիրապես հաջցրեց և հավաքելով բոլոր աշբուները, տարավ հնանանը, որտեղ սկզբից սպասառնել էին

պարանը, որպեսի բոլորին հայտնի դառնա իր կենդանի լինելը: Նրանք, իմանալով, որ նա չի մահացել, նրան քարձարացնելու նամար քաշեցին պարանը: Երբ նա վեր քարձարացվ, [մարդկի] տեսան, որ նրա մարմինը ժամանակից փոփոխության էր ենթարկվել, բայց նրա վրա չկար և ոչ մի վերը կամ թիճ: Հանդերձներ քերելով հացցրին նրան, քանզի նա մերկ էր վիրապ նեղով: Նրան առնելով մեծագույն ուրախությամբ քերեցին Վաղարշապատ քաղաքը: Վիրապում եղած ժամանակ նրան հաց ու շոր էր թրությամբ սպասափորական տորոմից սերող մի արի կին:

ԳՐԻԳՈՐԻՈՍԻ ԳԱԼՈՒՍՏԸ ՎԱՂԱՐԺԱՊԱՏ

92. Երբ երանելի Գրիգորիոսը մտուցավ քաղաքին, անմաքոր ոգիները խոզի փոխակերպված թագավորին գնալ արքին ընդառաջ: Նախարարներն ու բոլոր մեծամեծները, իմանալով Գրիգորիոսի գաղուտը, դուրս եկան և քաղաքի առաջ սպասում էին նրան: Տեսնելով նրան, և նրան Արտաշատ քաղաքից մետքու Օտայի և քաղում այլ ժողովոյի գաղուտը, դևերի ազդմամբ նրանք սկսեցին իրենց մարմինն սուտել ու հանդերձները պատառուել, վագեցին նրան ընդառաջ: Խոկ երանելի Գրիգորիոսը, ծնկի գալով նրանց համար աղոթեց Աստծուն և նրանք, դևերից ազատվելով, մաքրվեցին: Բոլոր ապարինությունը՝ թագավորի մարդկի, նախարարներն ու համայն ժողովորդը նրա ուրուերի ընկերությունը, ասացին. «Ներիի մեզ քո հանդեա գործած անարդարության համար»: Խոկ երանելին ասաց նրանց արարշին անմանալի, որ առենծեց երկինքն ու երկիրը, արեական ու լուսինը, աստղերը, ծովն ու ցամաքը և նա կրծքի ձեզ»:

Սրբոց Հռիփսիմյանց թաղումը

93. Երանելին ասաց նրանց. «Որտե՞ղ են սուրբ նահատակաց աճյունները»: Նրանք պատասխանեցին ու ասացին նրան. «Ո՞ր նահատակեներին դու ընկատի ունեսու: Նա ասաց նրանց. «Քրիստոսի սիրովն սպասված կորսերին»: Նրանք ցոյց տվեցին վայրը: Գնալով այնուեղ, նա հավաքեց նրանց ազունեները իրենց նահատակված վայրում: Նրանք համոզվեցին, որ Աստծոն զորությամբ սրբերի մարմինները [անուշ] պահպանվեցին. ինչ օր ու գիշեր էր, ինչ աճյունները նետված էին, բայց ոչ մի գագան, թոշուն, քաղաքի և ոչ մի շուն ձեռք չեր տվել նրանց: Տեսնելու էր, թե ինչպես նրանք գիտեն քարթամ էին մնացել, կարծես գինով քերելով: Նրանք ճոխ հանդերձները քերելով, ուզում էին նրանց հանդերձավլորել, բայց երանելի Գրիգորիոսը, թագավորի [մարդկանց] և թագավորի նախարարների քերած հանդերձները նամարեց ոչ արժանի, թույլ չտվեց, և սրբերին կից եղած նրանց հանդերձների ծվենեները ժամանակակիրապես հաջցրեց և հավաքելով բոլոր աշբուները, տարավ հնանանը, որտեղ սկզբից սպասառնել էին

¹² Բնագրում՝ սատրապներին:

¹³ Հմտ. Գործ առաքելոց, ԺԴ, 14:

Աստծո սուրբ կոյսերը: Երանելին էլ մշտապես աղնատե՞լ էր մնում: Այդ ամրող գիշերը նա աղոթում էր Սաստծուն, խնդրելով որ իր ժողովրդին փրկություն շնորհի: որպեսզի մարդիկ ապաշխարելով, բոլոտն զտենան Հաջորդ օրը թագավորի մարդիկ, նախարարները, մեծամեծները և քաղաքի համայն ժողովրդը զալով սուրբ Գրիգորիոսի մոտ, նրա և սուրբ անունների առաջ ծնկի գալով, խնդրում էին ասկով: «Ների մեզ ամեն մի անարդարություն, որ գործեցինք քեզ և սուրբ կոյսերին, և պահատիր քո Սաստծուն, որպեսզի մենք չկորչենք»:

Գրիգորիոսի քարոզ

94. Սուրբ Գրիգորիոս սկսեց ասել նրանց. «Ում որ դուք իմ Աստվածն եք անվանում, նա է ամենազոր արարիչը, որ նաևիքը քարին է ցանկանում մարդկանց, նա ով ձեռքի շշանով ստեղծեց ամեն ինչ, նա որ ոչչից ստեղծեց երկիրը և ամեն ինչ, որ նրա մեջ է: Նա է Տէրն ամեննեցուն, նրան ճանաչեք, որպեսզի բովանան արժանանան ձեր վկա եկած վերքը քորդաներների, որոնցով նա, որպես գթացող ու մարդասեր, խրատու ձեզ, ինչպես ասում է սուրբ Գրիգոր, թե «Ճոր սիրէ Տէր՝ խրատէ, գանալից առնէ զրոյի՛ զրո յակն առնո»¹⁵: Նա որպես մարդասեր Աստված կոչում է ձեզ որդեգործարան: Խսկ Որդին Աստծո, որ ամոր չհամարեց եղբայր անվանել բոլոր նրանց, որոնք հավատարիմ են իրեն և երկրպագում, կշնորհի ձեզ Սուրբ Հոգով ավետում իր սիրո և կը-քերկուածնի սրտերը ձեր անվերջ քերկուածով: Եթե դուք դարձի գալով ընթանար նրա կամքի համաձայն, նա ձեզ կտա լյաների անմահությունը:

95. Դուք յավ ասացիք. «Աստվածը քո» քանզի նա Աստվածն է իրեն ճանաչողների, խսկ ովեր չեն ճանաչում Նրան, թեպես և են նրա արարածները, սակայն օտար են Նրա սիրո ու մարդասիրության: Խսկ ովեր երկրուում են Նրան, նրանց մոտ է Նա և Նրա նախախնամությունը մոտք է գործում նրանց մեջ և պահպանում նրանց: Դուք ասեք. «Ո՞ւ է Նա պահպանում իրեն երկրուողներին: Ձ» որ մեր ձեռքն ընկածներին մենք մահապատժի ենթարկեցինք, մենք դատապարտեցինք նրանց ըստ մեր կամքի»: Խմացեք, ինչու Աստված կամեցավ մարդկանց մանկան Բանգիստան, [Կամեցավ], որպեսզի իր փառաց ներկայությամբ հայտնի դարձնի այն բարիքները, որ պիտի տա Նա իրեն սիրողներին, ճանաչողներին և իր կամքը կատարողներին:

Խմացեք և այս, թե ինչպես նա իր աստվածության զրությամբ կայուն և հաստատուն պահեց իր սուրբ կոյսերին, ինչպես բազում նեղությունները չկարողացան և ոչ մեկին շեղի իրենցից, ինչպես սուրբ Հոգիսիմերին իր ընկերներով համերձ անքիծ պահպանեց ձեր պղծությունից, ինչպես և ինձ անարձանին իր բարությամբ արժանացրեց իր մեծ անվան միրուց այսքան ու այսպիսի պատիճների այսքան ժամանակ տոկալ, որպեսզի արժանացնի ինձ երկնային ժառանգության, ինչպես ասաց աստ-

վածային Պողոս առաքյալը, [Ժառանգություն], որին երանի դուք էլ արժանանաք և իր խորքերով ըմբռշնելք Քրիստոսի բարիքները, թե «օրինակ է Աստուած, որ արժանի արար զմեզ՝ հասանելի ի մասն ժառանգութեան սրբոցն ի լոյս»¹⁶: Արդարն, մենք նաև պատահ դրան, որպեսզի հաղորդվելով մեր փրկիչ Հիւսուս Քրիստոսի շարշարանքներին, ըմբռշնելքը և նրա ամսան փառը¹⁷:

96. Դուք և ճանաչեցեք Նրան, որ կոչեց ձեզ իր սրանչելի լուսին¹⁷, եկեք Նրա շնորհան զամի առաջ, որպեսզի ողորմություն գտնենք Նրանից¹⁸: Հրամարվելով ամեն մի շարից, լվացեք ձեր սրտերը կենդանի շրով, որպեսզի արժանանալով լուսի փառքի պատմուածնին, հագվեցենք ձեր հոգիները Դուք գիտեք Սուրբ Հոգիսիմերի մասին, թե ինչպես նրան Տերը պահեց և փրկեց ձեր ձեռքից և ձեր ամեն մի անօրեն դիտավորությունից: Գիտեք նաև, թե ինչպես Աստծո զրությամբ մի կոյս խորտակեց ձեր. Տրդան թագավորի մարդկային հնկայական ուժը: Իմ վերաբերյալ էլ համոզվեցիք, որ տամունինզ տարի մթին ու խորագույն վիրապստ ապրեցի, բնակվելով օձերի ու կարինների մեջ, բայց քանի որ ևս Աստծո վախն ունեի, թունավոր գազաններից և ոչ մեկը չինանդնեց ինձ վասակ, ոչ էլ ես երբիցեն նրանցից երկուուցի, ոչ էլ իմ սիրու վախ զգաց, քանզի ես վասակեցի Տեր Աստծուն, արարչին ամենանի: Մենք էլ գիտենք, որ ինչ մեր համեսկն գործեցիք, անհիտությունից արևիցիք: Արդ, դարձի եկեք, ճանաչեք Տիրոց, որպեսզի նա ողորմ և փրկի ձեզ: Խսորեցեք նաև Նրանից, ում սպանեցիք, որպես կենդանի մարդկանցից (նրանք առ Աստված վախանական չեն, այլ կենդանին են), որպեսզի ձեզ նամար բարեխոսեն գթացող Աստծուն:

97. Հրամարվեցեք նաև քարե, փայտե, արձաքն, ուկե, ամեն տեսակի արձանների պիղծ պատշաճությունիցից, քանզի սուս են և սնուտի: Ես անցըլառն ևս նույն քանի էի սոսում սրաց շորջ եղած ձեր մոլության մասին, քանզի ձեր մոտավոր աշքերի առջև մուտք խավառն էր գտնվում և դուք չէիք կարողանում նաևկ տեսնելու համար, ընկայելու և ճանաչելու առեղծողին ու արարչին ամենայնի: Ես տեսնում էի, թե ինչպես դուք օտարացնում եք ձեզ ճշմարիտ Աստծո պաշտամունքից, և թեպես դատնագույն ու սարսափելի պատիճների էի ենթարկված, չէի դադարում գիշեր ու ցերեկ պահատել Աստծուն, որ Նա կորսացան չմատնի ձեր հոգիները: Իր մարդասիրության առատության, իր անափ մեծագործության պատճառով, Նա աշխարհի հիմնարկությունից ի վեր մարդուն խոլոց ընթանալ իր կամքով: Այժմ նա կանչում է ձեզ Իր փառքին ու հավիտենական կամքին: Նրա համար է Նա Իր սուրբ վկայեն, որ Նա է Աստվածն ի վերա ամենանի, որ թագավորությունը Նրա հավիտենա-

¹⁵ Կոդ. Ա, 12:

¹⁶ Հմտ. Ա Պետր. Դ, 18:

¹⁷ Հմտ. Ա Պետր. Բ, 9:

¹⁸ Հմտ. Եթր. Դ, 16:

կան թագավորություն է և տիրությունը Նրա անվախճան: Նրանք իրենց մասն կնքը դրեցին [ի վեպություն] առ Աստված ունեցած Եշմարիս հավատորի:

98. Արդ, սրբերի բարեկատությամբ ճանաչեցիք Աստծոն, նրանք ճանառող եղան մահվան նրդուն Աստծո: Քանզի Որդին Աստծո, մեր Տեր Հիսուս Քրիստոս, մեռավ որպեսզի իր ստեղծած մարդկանց մտելությունը կնդանացնի, ոչ թե որովհետու չեր կարող առանց սեփական մահվան մարդուն փըրկել, այլ որպեսզի իր չարչարանքներով բարձրացնի մարդկանց սկրությունը: Դա առանց իր սուրբ վկայից վկայությամբ էլ կարող էր որպես Աստված ընդունվել, բայց կամ ինձ պատկերի մեծ պահանջների արժանացնել մինչև մաս իրեն սիրած [մարդկանց], այդպես տնօրինեց: Արդ, իմացեք ինձնից, ինչպիսի զանազարդությունների ու դաժանագոյն չարչարանքների հետարկելով, ինձ, այսպիսի վիրապ գցեցիք, որ ևս քաղաքած էի օձերի ու քարերի բազմության մեջ: Բայց անըմբնելի ողորմածությունը Տեր Քրիստոսի ինձ փրկեց նրանց միջից: Դեռ ավելին, այն արժանացրեց ինձ իր խոսքի բարովչության, որպեսզի փրկարար ներ տամ ձեր նոգիների ու մարմինների համար, որպեսզի բուժվերի, ճանաչեք Եշմարիս Աստծուն,

99. Արդ, եթե դուք ներ խոսքը իրավանց արարչին ամենայնի, կիրիկեր և կրմրջաններ կյանքը հավատենական, ձեռք կրերեք նաև երկնային թագավորությունը: Եթե դուք ձեզ մարքեր, հրաժարվելով այն պղծություններից, որոնք ձեր անհիտությամբ պաշտեցիք, դուք կատանաք անձանելի բարիքները մարդաւեր Աստծոց, իսկ վկաները, որոնց դուք դառնազոյն պատճենների հետարկելով սպանեցիք, նրանք ևս սիրով կրարեխտեն ձեր փրկության համար, և մեր բարովչությունն ու վարդապետությունը ձեզ մեծազոյն օգուտը կրենեն, դուք երկար կյանք կունենաք, կրմրջաններ երկրային բոլոր բարիքները և ի վերա ամենայնի երկնային թագավորությունը կմատանքեք: Բայց եթե դուք չցանկանաք ընդունել մեր վարդապետության բարովչությունը, նա ձեզ կիսարվածի նախկինոց էլ ամելի սարասիլի փորձությամբ, վրեմք կատնի արդար արյան, որ դուք անպահ կերպով նուցցիք և կիսանձնի ձեզ օտար թշնամիների ձեռքը և ձեզ բոլորի դատն մահվամբ կոչնշացնի»:

Հայերի գոշումը

100. Նրանելի Գրիգորիոսի նրանց այդ բանն ուսուցանելուց հետո, նրանցից յորաքանչյուրը ձեռք տալով իր հանդերձներին, պատառուեց, իսկ նախարարները և բոլոր մեծամեծները մտիրի վրա նատելով, ասու էին երանելուն: «Արդյոք մենք Աստծո մոտ որևէ նորս ունեն՝ չ» որ ընթանալով մոլորության մեջ խավարային ճանապարհով էինք գնում: Արդյո՞ք մեր բազմության անօրինությունները թողություն կատանան:» Եվ ասաց նրանց Գրիգորիոսը: «Աստված, ինեւնի մարդաւեր, երկայնամիտ ու գթառաւ, կողորմի բոլոր նրանց, որոնք անկեղծորեն կլուզեն նրան, նա թողություն կտա անօրինություններին բոլոր նրանց,

որոնք ամբողջ արտով կցանկանան այդ: Նրանք նախաչանոր սկսեցին ասել: «Ծանոթացրու մեզ և ամրապնդիր մեր միտքը, որպեսզի ճանաչենք ճշմարիս Աստծուն՝ մեզ ստեղծողին...¹⁹ և ապաշխարենք: Ապաշխարելու տեղ ունե՞նք մենք արդյոք, մեզ չի՞ լրել արդյոք ապրելու հույսը: Եթե նա հիշի անցյալում գրությամբ մեր անօրինությունների պատճառվ, նա կիրկի՞ մեզ [իր] մեծ ողորմածությամբ: Դու անմիջապրոքն տվեցիր մեզ բարի Վարդապետությունը՝ ընթանալ նրա Եշմարիս ու արդար ճանապարհությունք: Սրբի մետ այդպես խուզվու նրանք բարձրացնելու գործում էին և թափակ մեր անօրինությունների առջականությունը: Նրանք գեր կարծ ժամանակով չէին համարձակվում նրանց հետանալ, [ներկույթով] դեմք հարվածից և նրանց կողմից իրենց հասցվու տանշանքներից: Երբ գեր կարծ ժամանակով նրանք փորձնեցին բաժանվել նրանց, անմարուր դեմքը դարձայ իրենց վրա խուժելով ստիպու էին նրանց սեփական մարմինն ուտել:

Գրիգորիոսի նոր քարոզը

101. Ամենասարոր Գրիգորիոսը, լսելով նրանց իրեն ապահ բոլոր խոսքերը, սկսեց արտավախից ասել նրանց: «Դուք ինքնեւերդ գիտեք այն բոլոր չարիքների մասին, որ գործեցիք իմ հանդեպ, այնպիսի սարսափելի պատճի տվեցիք իմն, կարծես ունրագործ լինենի: Բայց և ինքնեւերդ գիտուք, որ ևս ձեզանից և ոչ մեկի հանդեպ անարդարություն չգործեց: Ոչ ոք մի պահ անզամ ի վիճակի չէ պարան ու այսպիսի սպառնեւերդ տեսքին տոկալ: Խսկ դուք ինձ նրանց մեջ զցեցիք տասնեմինտ տարի, և մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհիվ ևս անվնաս մնացի: Անա դրանց իմացեք Աստծո զորությունը, որ լինելով արարիչ, կարող է բոլորի բանականությունը փոխել: Նա խորագոյն վիրապում թունավոր գազանեներին լցնուած դառնուեց իմ՝ իր ծառայի նկատմամբ և թեև ևս նրա աղքան մարդասիրությանը անարժան ևս, բայց ձեր փրկության, [ձեր կողմից] Նրան ճանաչելու համար ևս փրկվեցիք, որպեսզի իմ բարովչությամբ իմանա Նրա այսպիսի նրաշըները:

102. Ես չեմ կարող շրացանալու ձեզ բոլոր այն, ինձ նրամայել է ինձ Տերը ձեզ բարովեք: Երբ դու վիրապում էի, ևս ամեն օր տեսիլիք մեջ Նրա նրեցտակեներին էի տեսնում, որոնք սրտապնդում էին ինձ. Ես այժմ էլ եմ տեսնում Նրա նրեցտակեներին, որոնք ասում են ինձ. Արիացիր որ գորացիր, բանի Տեր Աստվածը փրկել է քեզ և արժանացրել բարությունը մինչու Նրա խոսքի, նա իր սպասավորության գործը քեզ տվեց, որպեսզի ներք էլ նր բոլոր սպասավորների մետ միասին վարձ ստանան: Այդ ևս ասում ոչ թե անձն գովելու համար, այլ որովհետու ննարապն չէ Աստծո նրաշըները թաքցնել: Պատմես ձեզ, թե ինչպես նա ինձ փրկեց այդպիսի մասին: Քանի ևս ձեզ համար ևս արդեկներին մեռավ էլ ինչպիսի մասին:

¹⁹ Բնագրում եղած ապահ է:

38

լինելով, կենդանանոմ եք իմ ձեր կողմից մեռած
բամարվածի կրոլից:

103. Ինձ մրամապել է Տիրոց կողմից հաստիվ ձեզ Նրա բոլոր սրաների մածագրոքը ուրախեցր, որպեսզի մեռացնելով ձեզ կուռքերի սպոսի պաշտամութից, Նրա շնորհընը դարձի բերեմ ձեզ ճշմարտության անապահությ, դեպի Կենդանի Աստված, երկնքի ու երկիր և հրանց մեջ գտնվող ամեն ինչի արարքի, դեպի Իր Միաձին Որդին, և ամեն ինչ կենդանացնող Սուրբ Հոգին, որպեսզի պաշտամությով, արժանանաք ըմբուշներու Նրա ավելուած բարիքների:

104. Այդ, նայեք Հովհաննեսի՞ն՝ ապաշխարտության մեծ քարոզչին, ինչպես էր նա բարձրացայն խոսում Աքրանամի սերնի մեռ ասելով. «Արարեք պատմետու պտող արժանի ապաշխարտութեան. և մի համարիցեք ասել յանձինս թէ Ունիմք մեք հայր զԱքրանամ, ասեմ ձեզ, զի կարող է Աստուած ի քարանց յարցանէ յարուցանել որդիս Աքրանամու»²⁰. Այդ ասելով նա Աքրանամին պատվից չեր գրկում, այլ հրանց ապաշխարտության կոչելով, դրդում էր քարեգործությամբ Աքրանամի արժանի զավակները դառնալ. քանզի (հա) հոգում է և թերլինցնում պտղաբերողներին, իսկ պտող ...²¹ միայն չորանում ու կրակը գցում:

ասում. «Եւ եղիցին ներանուք²⁵ խարշաւը իրոն զիմոց բագարակի՝ այրեցեալ և ընկեցեալ»²⁶, իսկ պտղաբերողներին ևս ուրախացնում է իր բազավորթյան մեջ մեջնորդ գարնանը իր պատուղ պատրաստ ունեցողին և հասողութ է «Է որ նարեր, և է որ վարսուն, և է որ երեսուն»²⁷ այսինքն. տաղին է մարդկանց աշխատանքի վարձը՝ ըստ յուրաքանչյուրի հավատքի:

106. Արդ, եղբայրներ, փոխանք հասարակաց փրկության, որպեսզի դուք էլ ապագինվեք ծեր գըլ-խին եկած պատուհասից, որպեսզի ձեզ համակած խոփոխությից [ազատվեք] ու անդրորություն ստանաք, և մոդորության կողմից գերված ձեր բանականությունը դարձի գա փրկության: Ես ձեր լողությանը հասցրի երա աստվածության բոլոր պատզամերը և առնասարակ շաբացը ի ձեզ համար օգտակար և ոչ մի բան: Արդ, եկեք հավաքենք սուրբ համատակների ամբողջները, որպեսզի երանց միջոցով ձեզ պապախննում պարզավիճ, [Եկեք] երանց վրա վկայարաններ կառուցնեք, որպեսզի երանք էլ իրենց բարեխսությամբ թեթևացնեն ձեզ ձեր վրա իշած պատուհասից ու փորձանքից:

107. Ապահովարեք խոստվանությամբ ու խոնարհությամբ, ին Բավարով և ամենայն պահըով, որպեսզի [Նա] ձեր սրտերում ողջամտություն տնիկ՝ իմանալու Նրա կամքը, արծանանալու Արտուրյան սուրբ Վագնան, մասնակից դառնար սրբերի ժառանգությանը, Բանեք լուս ժառանգության և ճանաչեք զորույթունն ու պարծանքը խաչի, որ կորույացների համար հիմարություն է, բայց ձեզ՝ իմաստությունը զիտեցողներին ու փրկվաներին համար՝ Աստծո զորությունը²⁸: Նա ձեզ կարծանացնի Եր որդինագորության, կրավի ձեր մեղքերը, կրտողին ձեր հանցանքները, կարծանացնի ձեզ մասնակից լինելու իր սրբերի պահին, Երեն փառավորողներին հաղորդակից կրտպնի, արծանի կրտպնի Եր սուրբ Խորություններին, երբ կվանաք սատանաշական ամեն մի առտևություն: Նա ենց իրեն սատանային ձեզ կու, որպեսզի Աս կոխան լինի, որպեսի մտնելով իր աստվածության առաջասար, Բաղորդակից դառնանք սրբերի ուրախության, ճաշակելով միըն ճշմարիտ գառան՝ Որդուն Աստծո, և ըմպելով արյունը Նրա, Բաղորդակից դառնանք Քիսասոսի չարչարամբներին և մասնակից Նրա փառքի, որպեսզի Նրա մեջ մենք մեկ Բոգի դառնանք, Բաղորդակից Նրա սուրբ արյան ու պատվական մարմնին: Այս բոլորը ասեղով նրանց և աղոթեղով նրանց վրա, երանելին ասաց. «Յուրաքանչյուրդ աներկուող գնաւառին պահանան»:

108. (Քանի արդեն երեկոն էր վրա Բասել), և Վաղը փոթացեց զա կառուցելու Բամար, սորու ամուսների Բամար առողջա տեսեր, որպեսզի հրանք

²⁰ Մատթ. գ, 8—9: Ղուկ. գ, 8:

²¹ Բնագրում եղծված է:

²² Հմատ. Մատթ. ԻՒ, 19, Մարկ. ԺՒ, 13—14:

23 Մասթ. իԴ, 32:

24 Մատթ. գ, 10:

²⁵ Հունարեն բնագրում՝ պաշտօն (մեղավոր-ԸՆ):

²⁶ Bu. 19, 12.

27 Մայիս, օր. 23:

²⁸ Հմմտ. Ա, Կողը. Ա, 18:

Ել երկրային շինության դիմաց երկնային բագավորության մէջ ձևա համար հարկեր պատրաստեն, որոնք հույսն ունենք ըմբռչվածքու, և սրբերի բարեխոսությամբ արժանանանք Քրիստոսի բագավորության: Չի նորա են փառք և զօրութիւն ազժ և միշտ և լայտնեան լայտնեանից, ամէն»: Այդ ասկով, արձակեց համայն ժողովրդին՝ իր մոտից: Բայց բագավորն ու նրա մեծամեծները նոյնին կարծ ժամանակով չին մետանում երանից, նրանք դեռ հարվածայ էին և գիշեր ու ցերեկ երա մոտ էին մնում ազիների մէջ զանովու հնանանում, քրծեր հազած, մոխրի վրա նստած և պամբ պամելով: [Գրիգորիոսը] վախտութիւնց օր խրատում էր ամեն մեկին, հաստատում ի ճշմարիտ և հաստատուն հավատքը, որ ի Տեր Հիսոս Քրիստոս:

Տրդատ բագավորի ապարինումը

109. Եթե ծագեց վախտունվեցերորդ օրը, մեծամեծների ու համարաբները, բոլոր իշխաններն ու համայն ժողովուրդը՝ կանանց ու երեխաններով և կամ սուրբ Գրիգորիոսի մոտ և աղաջում ու խնդրում էին նրանից բուժել իրենց պատուհանից և ամենից առաջ բագավորին, բանզի նաև դեռ վայրի խոզի կրապարանուր:

110. Քրիստոսի երանելի վկա Գրիգորիոսը մնաց որ վիրապից դորս եկավ և ստաշուրդվելով Քրիստոսի շնորհը կուալ համատակա վայրում, բոլոր նոյն տուղ հավաքվեցին՝ մոլցնած և սեփական մարմինն ուստեղով: Այսամբ թագավորն էլ և կայ հիշյալ վայրը: Այն ժամանակ ամենասուրբ Գրիգորիոսը խնդրեց բարի և մարդասեր Աստծոց, որ Նա [Տրդատին] տա մարդկային բանականություն ու լիզու, որպեսզի նա ընդոնի իր ասածի զորությունը. նա վախտունվեց օր այդ վիճակում էր գտնվում.

111. Եթե բոլոր սկսեցին սրբից խնդրել, որ նա բուժի բագավորին, վերականգնի նրա նախանին մարդկային կերպարանը, երանելի Գրիգորիոս ասաց նրանց. «Ես էլ ձեզամին մեկը իմեկով և գրեթե նոյն կրելով ձեր կողմից, խնդրում եմ մարդասեր Աստծոց ձեր բոլորի փրկությունը: Դուք [ևս] նրանից ամրող հոգով բուժում խնդրեցք Աստված մարդասեր է և նա կողորմի ձեզ: Ամենանին մի վախեցեք, բանզի Նա ուշադրություն դարձնելով ձեր բարյացակամության վրա, ձեռ կփրկի և կրուժի: Բայց փոխացք կառուցելու աղոյից տները, որպեսի հանգիստ տանք Աստծո սուրբ համատական անյուններին, որպեսզի նրանք էլ բարեխսուն ձեռ համար և փրկեն ձեզ պատուհանից, ազատեն ապագա սարավիլի ու դառնագոյն դաստանանից, որպեսի մեր Տեր Հիսոս Քրիստոսի բագավորության արժանանանք»: Նրանք պատասխանեցին ու ասացին. «Բոլոր հրամանների մենք կիմազանդվենք և կկատարենք: Խնդրում ենք փոխով ասա, թե ի՞նչ պետք է կատարենք»:

112. Երանելին ասաց նրանց. «Բոլոր շտապենք սրբերի անյունների համար հանգստարաններ կառուցեն: Դեռևս խոզի կերպարանը ունեցող Տրդատ բագավորը, որ միայն խոսելու ու զգալու

մարդկային հատկությունն էր ստացել, նվելով սուրբ Գրիգորիոսի պաղասում էր նրան, որ իր ձևոքերից ու ուրերից ընկենն կճակեները, որպեսի մյուս աշխատողների մետ կարողանա մասնակցել սրբերի [Վկայարանների] կառուցմանը: Խոկ երանելի Գրիգորիոսը ծուեր դրեց ու աղոթելով պաղատեց ամենազոր Աստծոն, որպեսի նա բուժի բագավորութիւնն անա երկնքից ձայն լսեց, որ ասում էր. «Գրիգորիոս, արիանցիր ու զրացիր, բանզի ևս թեզ մինչև համիշյան: Եսու ինձ համար եկեղեցներ կկառուցեն և կրաքարացնեն նրանց եղջաբար: Խոչի մասին, որ դու աղոթեցիր, ամսա ևս լսեց ու ձայնը և այն շնորհը, որ խնդրեցիր, կպարզելու թեզք: Նա դարձավ դեպի բագավորը և դիակելով նրա ձեռքին ու ուռերին, մեր Տիրոց Հիսոս Քրիստոսի շնորհը վերականգնեց [նրա] մարդկային կերպարեց: Թագավորը հարցուց երանելի Գրիգորիոսին, ի՞նչ է հրամայում: Նա նրան տվեց բագավորների չափերը, որոնց համեմատ նա պետք է [փոսեր] փորեր սուրբ անյունները ամփոփելու համար: Թագավորը պետք խնդրել սրբին, որպեսի նա հրանայի իր կնոց Աշխանին ու քրոց Խոսրովիդուխտին ներկայանալ մասնակցից դառնալու սրբոց շինարարությանը: Երանելին թույլ տվեց, և նրանք մասնակից դարձան գործին:

Վկայարանների կառուցումը և Հոփիսիմյանց աճրուների ամփոփումը

113. Թագավորը, վերցնելով բրիչը, փորեց այն տեղերը, որտեղ պետք է ամփոփվեն սրբերի դագաղները, իսկ [Տրդատի] կիմն ու բռյուր կողմների փոխարևն իրենց հանդերձներով էլին հողը տեղափոխությունում: Անս արքան բարի խստովանույթամբ համատակա վայրում ներթականությամբ ամփոփեցին սուրբ Հոփիսիմյեն և նրա երեսուներկու ընկերունիներին]: Նմանապես մի տուն աղոթից կառուցեցին այն վայրում, որտեղ համատակլեց երանելի Գայանեն երեք կուսերի մետ և նրանց աճրուներն ամփոփվեցին: Մի տուն աղոթից էլ հնանաւում կառուցեցին, որտեղ ամփոփեցին այդ տեղում համատակլեց կուսի պատվական աճրուները: Աղոթաների կառուցմանց և սրբերի աճրուների ամփոփություն ենտու, թագավորը խնդրեց սուրբ Գրիգորիոսին թույլ տալ իրեն գևալ Այրարատի²⁹ մոտ գտնվող լույս, որի անոնմ Մասիս էր: Նա, գևալով լույս և աճսելով գտնելով ուր հնկարական վեմեր, տաշեց ու թերեց աղոյից տները. այդ վեմերը պետք է ծառայեին որպես դուների պետք ու նրանց բարակութեալուր:

«Տրդիսի» տաճարի ավերումը

114. Եթե ավարտվեց սուրբ կուսերի վկայարանների [կառուցումը], Տրդատ սուրբ Գրիգորիոսին լիակատար իշխանություն տվեց քանդկել իր նախների կրապաչտական տաճարները և նրանց մէջ եղող կուրերը, որոնց ինը Տրդատը երկրպագու

²⁹ Բնագրում Արարատ:

եր, թույլ տվեց շարժել, վերացնելու համար այդ գարշելի կուռքերի՝ շաստվածների հիշատակն անգամ: Ինըք թագավորը դրս եւկալ Վաղարշապատից, սուրբ Գրիգորիոսի մեջ Արտաշատ քաղաքը գնալու համար: Ծանապարթին նրանք եղան Տրիդի կոչվող քաղաքում³⁰, դևերով լի Ապոլլոնի տաճարում, որտեղ բոլոր քրմերը սպիրություն ունեն դեմքի ազգամամբ գուշակություններ անել:

Արտաշատում գտնվող Արտեմիսի տաճարի ավերումը

115. Թագավորի հրամանով ի հիմանց այն ավելիցին: Տաճարում թանձնող դեմքը, տեսնելով դա, սկսեցին բարձրագոշ աղաղակել և համանջելով հիշյալ վայրից և ստանալով զինված ուսամիկների գնդի կերպարանք, գնացին Արտաշատ քաղաքում գտնվող Արտեմիսի տաճարը: Ծրջապատելով տաճարը, նրանք սկսեցին իրքն թե մետեղ օգտագործել թագավորական զորքի դեմ, որպեսզի դարձի ենուկությունը և իրանուկին, տեսնելով նրանց արդյունք նենագավոր գործունեությունը, նրանց դեմ տերության խաչի նշան անդառով, հասավ տաճարի դրույ: Տաճարն իւլուզ հիմնահատակ տապարվեց և հանկարծակի, տերության խաչի նշանի գորությամբ նրա հիմքերն անգամ հրկիզվեցին: Ծովով մինչև ամպերը բարձրացավ: Դեմքի ողջ քազմությունը փախտած էր դիմում, մարդկանց առջև կոծելով ու աւելով: «Վայ մեզ, համայն երկրից հայածական արեց Գրիգորիոսի քարոզած Հիսուսը. մենք այսունից էլ ենք հայածական լինում: Արդ, ո՞ւր գնանք: Նրա փառքը տիեզերքը լցուեց»: Այդ ասելով, նրանք անելությացան, ցրվելով ինչպես ծովի:

116. Խակ հավատացայ քազմությունները առավել ևս ամրապնդեցին մեր Տեր Հիսուս Քրիստոսի հավատքում և բոլոր միասին փոթացին տաճար ու մենացած հիմքերը կատարելավել կործանեցին: Սունելով ի սկզբանե անտի մոլորդավաների կողմից գարշնիմերին նվիրաբերված գանձերը, չքափորներին բաժանեցին, որքերին ու այրիներին: Աստծո ծառա Գրիգորիոսը բոլորին մեր փրկիչ Հիսուս Քրիստոսի հավատքին թերեց և նոյն վայրում աղոթարան կառուցելով և խաչ կանգնեցնելով, նրանցից սպասարկության մեջ նաև նաև անգամ կանոնական գործունեությունը սկսվեց: Նա շրջում էր բոլոր քաղաքաներում ու գոյությունը, բոլորին դարձի թերում, հաստատելով մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի հավատքում: Նա ամենուրեք աղոթարաններու կառուցում և խաչի նշանը կանգնեցնում:

Դարանաղիի Թորդան գուղում գտնվող մի տաճարի ավերումը

117. Առնելով Տրդատ թագավորին, (Գրիգորիոսը)

եղավ Հայաստանի մի այլ գավառում³¹, որի անոնն է Դարանաղի, որպեսզի այդ շրջանում էլ եղած կուռքերի տաճարներն ամփեն: Հասնելով Թորդան կոչվող գոյուղ և հրա մեջ տաճար գտնելով, տապալցին այն, չարդ ու փշուր արեցին կուռքերը, իսկ [տաճարում] եղած արծար ու ուկի գանձելով համանակն չքափորներին բաժանեցին: Այսուել ևս աղոթարան կառուցելով և պատվական խաչը կանգնեցնելով, թագավորի հրամանով բաղադրի շաղական դրական դրամանու շրջակա ովք տարածությունը աղոթարանին առանձնացրին: Այսուել ևս դեմքը, տեսնելով Տիրոջ Նրա ծառա սուրբ Գրիգորիոսի միասին բոլորին որպես աղոթար տապացնելով այդ գոյուղ [թանձնելու մեջ] թերեց մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի հավատքին և ամրապնդելով հրանց, թողեց տեղում:

Անիի, Երեզի և Թիլի տաճարների ավերումը

118. Նրանք հասան Անի կոչվող քաղաք-ամրոցը, որտեղ ի սկզբանե ամսի ըստ սպիրության թաղում էին վախճանված թագավորներին, կործանեցին այնտեղ գտնվող Կրոնոսի ու Զևսի տաճարը և ըստ սովորության այդ վայրում կանգնեցրին տերության նշանը: [Գրիգորիոսը] աղտեղի բոլոր [թանձնելու] ուսուցանելով և հաստատելով ճշմարիտ հավատքին, թագավորի մեջ նետացավ: Նա հասալ Երեզ գոյուղ, այսուել գտնվող Արտեմիսի տաճարը, որտեղ սկզբում ամսնատուր Գրիգորիոսին թագավորը հրամայել էր (Արտեմիսին) զոհ մատուցել: Այդ վայրում բանկվող դեմքը չկարողանալով տանել սուրբ Գրիգորիոսի ներկայությունը, սկսեցին դարձալ կերպարանափոխիլ և իրենց ներկայացնել որպես գինայ ուազմիկների: Նրանք քաղաքանայն գոյշում էին և լուսներն էին արձագանքում հրանց: Սուրբ Գրիգորիոսը նրանց դեմ խաչի նշանը արեց և նրանք իւլուզ անելությացան: Թագավորը հրամայեց իր համայն զորքին հիմնահատակ կործանել հիշյալ տաճարը և Արտեմիսի գարշելի ոսկե կոտրքը տապակելով շարդությունը արեց: Անցնելով Երեզի մոտից հոսող Գալլ³² անունով գետը, հասան Թիլ կոչվող գոյուղ, որտեղ էր գտնվում Արեմեասի տաճարը: Նրաներին հրամայեց այն էլ հիմնահատակ կործանել: Նրա մեջ գտնվող գարշանը քարելով, ուսուցանեց այսուել գտնվողներին, աղոթից սուս կառուցելով նոյնպես խաչի նշանը կանգնեցնելով, ասաց հավատացողներին: «(Այս) վայրում երկրպագեցներ մեր Տեր Աստծուն և նրան միայն պաշտեցեք»: Ան ասաւու ևս համայն այն գավառից հայածական արեց դեմքին, վերացրեց ամեն մի գայթակերպություն, շարեց կուռքերը և մարդկանց տվեց ճշմարիտ հավատքը առ մեր Տեր Հիսուս Քրիստոս:

³⁰ Հումարենում աղավաղված է: Տրիդի քաղաք գոյություն չունի, Սգաթանգեղոսի հայերեն բնագրում «Տրի դից» է: Խոսքը Տիր աստծու մասին է, որ համապատասխանում է հովաների Ապոլլոնին:

³¹ Բնագրում πατρίς որ «Բայրենիք» է նշանակում: Տվյալ դեպքում օգտագործված է գալատ իմաստով:

³² Բնագրում Լոռո:

Բազմայափենի տաճարի ավերումը

119. Տրդատ թագավորը, հավատքի մեջ առավել կա ջրմուռանդ դատապահ, դրդում էր իր թագավորության հեթակա բոլոր՝ [մարդկանց] հրաժարվել կուա[պաշտական] մոլորությունից, դարձի գալ ու հեթարկվել մեր փրկիչ Հիսուս Քրիստոսի հավատին ու լծին: Նա ամենուրեք քարոզում էր, խոստվանում սեփական ամբարտությունը, [իշշում] այդ առթիվ իր վրա և կած աստվածային պատիժը, հայտնում իր անձի նկատմամբ Տիրոջ ցուցաբերած մարդասիրությունը՝ սուրբ Գրիգորիոսի միջոցով բուժման արժանանալը, որով նա ամեն օր քաղում ժողովորդ էր դարձի թերում ոչ թե թագավորի նկատմամբ նրանց տածած երկրորդից, այլ մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի անվամբ նրա ծառա Գրիգորիոսի միջոցով կատարված ու կատարվող հրաշքների պատճառով, և հատկապես թագավորի ու նրա ամբողջ զորքի վրա և կած անտանելի փորձանքի բուժման: Թողմնոյն նրանց փրկիչ նավատրին ամուր կանգնած, նա հասավ մի այլ գալառ, որի անոնն էր Դեքչան, որտեղ ևս սերմանելով Տիրոջ ավետարանը և նոյացնելով մարդկանց կուպաշտությունից, դարձի թերեց մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի նշմարիտ ու հաստատում հավատքին: Կինելով մի այլ պարբնների լեզվով Բազմայափեն կոչված զուղում, որտեղ գտնվում էր Դիտնիսոսի տաճարը, այն էլ նիմնանատակ տապալեցին, [Դիտնիսոսի] կոտքը շարդուփշուր արեցին, իսկ [տաճարի] գանձերն առնելով, նոյնպես չքալորդներին բաժանեցին: Այնունա ևս կանգնեցնելով խաչի նշանը, այդ գալառի բնակիչներին դարձի թերեցին դեպի ուղիղ ու նշմարիտ հավատքը: Երբ այն բոլորը Սուրբ Հոգու համագործակցությամբ, Աստծո ծառա Գրիգորիոսի միջոցով արդպես կատարվեց, (Գրիգորիոսն) և կավ նաև դեպի թագավորի զորքը, որպեսզի նրանց ևս ամրապնդի և ուսուցանելով նրանց և հավատքում հաստատում կացուցանելով, թողեց գնաց:

ԳՐԻԳՈՐԻՈՍԻ ԶԵՐՆԱԾՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԵԽԱՐԻԱՑՈՒՄ

120. Իրենց ամրող ժողովորդի համաստարած ուղղումից հետո, թագավորը գնաց Այրարատի Վաղարշապատ կոչվող քաղաքը, որտեղ գտնվում էր իր պալատը և հրովարտակ հրապարակները, որ բոլոր իր հապատակները՝ նախարարները, մեծամեծները, իշխանները, առաջնորդներն ու զորավարները, իր մոտ նավարձենները: Հրովարտակի համաձայն նրանք ներկայացան, իսկ թագավորը սուրբ Գրիգորիոսի ներկայության նրանց մեջ ժողով արեց ու ասաց. «Ենկեք բոլորս միասին Աստծո ծառա և մեր փրկության առաջնորդ Գրիգորիոսին ծնկաչոք աղաքենք մեր նույիվը դառնա, որպեսզի նա, նորոգելով մեզ, սուրբ մկրտչությամբ կատարյալ հաղորդակից դարձնի մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի խորհուրդներին»: Ամենասուրբ Գրիգորիոսը, խոսափելով պաշտօնի ծանրությունից, ասում էր. «Ես արժանի չեմ ընդունելու

բանանայապետության այդպիսի պատիժն ու պաշտօնը, բանզի աննառելի է Տիր Քրիստոսի կողմից բանանայապետին տրվող պատիժը. բանանայապետ Աստծու և մարդկանց միջև միջնորդ է դառնում»:

121. Երանելին արդպես ասաց: Իսկ զիշերը թագավորը աստվածային տեսիլը տեսավ՝ Տիրոջ նրեշտակին, որ ներկայանալով իրեն ասաց. «Փութացեք Գրիգորիոսին բանանայապետ լամեն», որպեսզի լուսավորվեն ձեր նոգեները»: Նույն տեսիլը երևաց և սուրբ Գրիգորիոսին, նրան ներկայացավ նրեշտակն ու ասաց. «Մի՛ հրամարվիր ընդունելու քահանայապետության աստիճանը, բանզի այն քե՛զ է նախառավակած»: Երանելի Գրիգորիոսը պատասխանեց նրեշտակին ու ասաց. «Տիրոջ կամքը թող կատարվի»: Դրանցից հետո թագավորը իր մածամեծներով ու նախարարներով երանելի Գրիգորիոսին կրկին խնդրեց ընդունել բանանայապետությունը նա նոյն բանն ասաց. «Տիրոջ կամքը թող կատարվի»: Թագավորը ուրախությամբ լի գոհանամ ասաց Տիրոջ և նրամայց նախարարների և իշխանների առաջիններին, որ նավարձեն և սուրբ Գրիգորիոսի հետ զեան կապադվացաց երկիրը, Կեսարիա քաղաքը, որպեսզի նա քահանայապետ ձեռնադրվելով, փոթանակի վերադառնա Հայոց երկիրը:

122. Հասնելով կեսարացւոց քաղաքը, նրանք նաև հինդիկեցին սրբազնագոյն արքային կուպուու Ղեփոնիոսին և ամենասուրբ կելեղեցու համայն կրկին, որոնց պատմեցին նայոց ամրող ժողովրդի և Տրդատ թագավորի վրա և կած պատուիսի մասին, թե ինչպես Տիրը նրանք անափ ուրախությամբ լցվեցին:

123. Ամենասուրբ կախկուպու Ղեփոնիոսի հրամանով կախկուպուների բազմություն հավաքվեց սուրբ Գրիգորիոսին ձեռնադրելու համար: Նրա վրա ձուրիքը և սուրբ ավետարան դնելով, ընդունված աղոթքով նրան ձեռնադրեցին: Ամենասուրբ Ղեփոնիոսը, համայն կրկին ու իշխանները, ողջ քաղաքը սաղմուերգությամբ նրան նախարարնեցին Հայոց աշխարհից:

ՀԱՅՈՑ ԴԱՐՈՉԸ

Ավրողիտենի Աշտիշատում գտնվող տաճարի ավերումը: Մկրտություններ

124. Հասնելով [Հայոց աշխարհի] սահմանները, և իմանալով, որ Տարբ գալաքի Աշտիշատ գյուղում Ավրողիտենի տաճարն է մնացել և որ ամենու զոներ ևս մասուցում, [սուրբ Գրիգորիոսը] իր հետ կանոնական բազմությունուն ուղարկեց տաճարը կործանելու և նրա մեջ գտնվող գարշանքը շարդելու: Նրանք տեղում լինելով ոչինչ չկարողացան անել, բանզի դնելով փակել էին դոները և շրջապատել տաճարը: Իշխանները, հեռանալով արքաներից, սուրբ Գրիգորիոսին հայտնեցին, թե դների կողմից դոները փակելու և տաճարի դրսում նրանց իններու պատճառով ոչինչ անել չկարողացան:

125. Աստծո ծառա Գրիգորիոսը, լսելով այդ գնաց մուտքավ տաճարին, խաչի հաշան արեց ու ասաց. «Ով անմարուր դնէր. մեր Տիրոց ու փրկչի Հիսոս Քրիստոսի գորովայունը թող հաղածական անի ձեզ պատուից»: Այդ ասելուց անմիջապես հետո սաստիկ քամի բարձրացավ, հարվեց տաճարին և ազն հիմնավոյն կործանեց, իսկ նոր մեջ գտնվող [Աստիքութիւնի] գարշանը³³ քրմերի հետ միասին փոշիացրեց: Հիշալ գույի բնակիչները սարահամար նղած ընկան սուրբ Գրիգորիոսի ոստքրին, պաշատեցին ու ասացին. «Ան'զ էլ ծանոթացրու ծշմարիտ Աստծոն, որի գորովայամ սրանք կատարեցիր, որպեսզի մեր հոգիներն էլ փրկինն»: Ամենատուր Գրիգորիոս ուսուցանելով նրանց, ակնեց ասել. «Եուր անա համովվեցիր, որ ձեր պաշտօն այս կոուրերը ոչինչ էին: Արդ, այժմանց սկսալ դոր մեր Աստծոն՝ երկին և երկիր և նրանց մեջ եղած ամեն ինչի արարչին ծառալիքը»: Նոր որիրին ուսուցանեց, և կերպու միմքրել զցոց, սկզան հանգնեցրեց ի փառ մեր Տիրոց Հիսոս Քրիստոսի, մկրտույան ալվանա կատուցև և մկրտու նրանց, սկսելով իր հետ Կեսարիա գնացած նախարարներից ու իշխաններից: Այնուո՞ւ նա մնաց քանի որ և մկրտու այդ գալաքտի բոլոր բնակիչներին տասնին բյուր մարդ: Նոր երենքը, սպրկավաներ, ապա քահանաներ ձեռնադրեց, նոյն գույի եկեղեցում կառուցեց³⁴, թոյլ տվեց հիշալ գալաքտների բոլոր բաղաբներում ու գոյուերում եկեղեցներ կառուցել և քահանաներ հաստատել:

Մկրտույուններ Բագավանում

126. Տրդատ բագավիրը, լսելով սուրբ Գրիգորիոսի կապահովկացլոց երկիր Հպատակ ծամանը, իր համայն գործով, կնոց ու քրոշ հետ եղավ սրբին ընդառաջ: Նա գնաց Բագավան կոչվող քաղաքը, որտեղ սկիզբ է առնուն Եփրատ գետը: Թագավորը իր գործով և վերոնշյալ կանանց հետ դիմավորեց նրան նոյն Եփրատ գետի ափին և անսամբն ուրախույամբ ու բերկուույամբ լի նրան քաղաք մտցրեց: [Սուրբ Գրիգորիոսը], Բագավանով քաղաքի ժողովրդին և ուսուցանելով նրան Տիրոց խոպք, սկսեց եկեղեցի կառուցել: Նա [Ժողովրդին] նախապատրաստեց երեսուն օր պամբ պամել, մինչև որ ավարտի կողմէ Տիրոց կողմից բազում սրացներեց, ապա առնելով թագավորին, [նրա] նամայն զորքը, [թագավորի] կնոց Աշխեմին և քրոշ Խոսրովիդուսին, եկավ Եփրատ գետը, որտեղ բորիրին մկրտեց Բանուն Հոր և Որդին և Հոգվոյն Սրբ: Նրանց մկրտույան պահին Տիրոց կողմից բազում սրացներեց նրաշքներ կա-

տարվեցին: Երբ նրանք չուրը մտան, գևսի ընկածքը խկոյսն կանգ առավ, ոչ մի տեղից շափակող օճան սուրբ յուղ նրանց շուրջն էր պատվում և իրեւ լոյսի նկատական պատվուց խաչի նմանույթունն էր երևում: Երբ վրա համար երեկոն և բոլորն արդեն արժանացել էին համուն Տիրոց մկրտության, այդ սրաների և աշարկու հշանք վերացավ: Մկրտված ամբոխը, փառավորվելով ու փառարանելով Աստծոն, բարձր մտավ:

128. Մկրտվութեարի թիվը շուրջ տասնինց. բյուր կը: Ամա այդպիս նայոց համայն աշխարհում մինչև Մարտ³⁵ [աշխարհն] ու Աղվանք ընդարձակից սուրբ Գրիգորիոսի միջացով և շնորհութեանը Քրիստոսի սուրբ Անվանական քարոզությունը, նա բոլոր բաղադրելու եպիսկոպոսներու ու քահանաներ հաստատեց, ապա և վանքը հիմնացրեց:

Գրիգորիոսի վերադարձն ու մահը

129. Այնունան 〔սուրբ Գրիգորիոսը〕 ուսուցանեց և ի Տեր մկրտության արժանացրեց նախակին քրմերի որդիներին, նրանց՝ աշակերտների [թվին] դասեց, որից հետո նախավ այն լոռը, որտեղից դորս է գալիս Եփրատ գետի հոսանքը: Այնուո՞ւ նա իր [աշակերտների] հետ մնաց մինչև վերջը: Ժամանակ առ ժամանակ, ընդառաջիվ նախակառությունը, վանականների և քաղաքների [բնակիչների] թախանձանքն, նա իշնում էր մեր ծշմարիտ Աստծո, փրկիչ Հիսոս Քրիստոսի խիստան նախատրի մեջ ամրապնդելու արք բամի կարիքն ունեցողներին, որից հետո դարձալ լուն էր գտնում: Նա բնակիվում էր քարայրներում, լուսերի կատարներին՝ մնջ մարգարե Եղիացի և մեր փրկիչ Հիսոս Քրիստոսի կարավանը Հովհաննես Մկրտչ նախարարացլու: Տրդատ բագավիրը, նախարարներն ու մյուս իշխանները բազում անգամներ խնդրեցին նրան իրենց հետ ապրել, Աթք իշխան աշակերտութեարին, մշտապետ նրա կողմից ամրապնդելի, սական նա չնամաճանից ու ասաց. «Եուր ձեր արտերում ունեք մեր Տիրոց Հիսոս Քրիստոսին, նա մշտապետ կապահանի ձևոց»: Նա նախընտրում էր ամապատ տեղերում բնակվելի, որպեսզի շմեամտանա, մինչև վերջ իր ճանության սամնան որոշելով քառասուն օրը մեկ սավել, իսկ նրա կերածն էր բանշար, ընեղեղն ու ի նմեկու շուրջ: Ամա այսպիս իր ողջ երեսուականին կանքրում ի կատար ածեղով առաքելական գործը, նա նեցն ի փառ Հորն Աստծո և մեր Տիրոց Հիսոս Քրիստոսի և երկրպագելի Սուրբ Հոգով՝ այժմ և միշտ և նավիտյան նավիտեցից: Ամեն:

³³ Բնագրում աղավաղված ձեռով Կլիման Ժ. Գարիտը գտնում է, ո խոսքը «և Մարտ» ոչ Լիճաւ մասին է: Հայերն Ագաթանգեղոսուն տվյալ տեղում բացի «Մարտ» Արկիրից, հիշատակված է նաև «Անտարօռ» (Աղարշը): Բացառված չէ, որ Բունարենի Կլիման -ը «Կաղարչօռ»-ի աղավաղումը լինի:

³⁴ Տեքստում չի գրված, թե ի՞նչ կառուցեց: